МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No. 04/22.3/4429-2024
«04» 10 2024թ.

«ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ԻՆ

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)**

Հարգելի պարոն Սարգսյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար «Սարքերի, սարքավորումների, գործիքների և նյութերի» ձեռքբերման նպատակով 2023 թվականի սեպտեմբերի 15-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Մասնակից) հետ 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կնքվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/26»-2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) 7-րդ չափաբաժնի համար ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օր (23 դեկտեմբերի 2023 թվական), սակայն մինչ օրս 7-րդ չափաբաժնի մասով ապրանքները Ձեր կողմից չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է

Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները (մասնավորապես 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը)՝ տեղեկացնում եմ, որ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Մասնակիցը վճարում է Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա Պատվիրատուն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին: Հակառակ դեպքում Մասնակցի նկատմամբ կիրառվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ
Մելինե Սողոյան, հեռ. 060380040